

Կայացավ Հայկական վիրտուալ Համալսարանի Թբիլիսիի «Հայարտան » լսարանի շնորհանդեսը

HAYARTUN
AVC
AGBU

Armenian Virtual College

Транскрипция	Печатная буква	Название	Прописная буква
[a]	Ա ա	այբ	Ա ա
[u]	Ու ու	վյուն	Ու ու
[s]	Ս ս	սե	Ս ս
[r]	Ր ր	րե	Ր ր
[t]	Տ տ	տյուն	Տ տ
[i]	Ի ի	ինի	Ի ի

Փետրվարի 26-ին, Թբիլիսիի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ եւ Վրաստանում ՀՀ դեսպանության աջակցությամբ, Գալուստ Գյուլբենկյան սրահում կայացավ Հայկական վիրտուալ համալսարանի թբիլիսյան լսարանի շնորհանդեսը : Ներկա էին վիրտուալ համալսարանի սովորողները ,

1 / 6

Կայացավ Հայկական վիրտուալ Համալսարանի Թբիլիսիի «Հայարտան » լսարանի շնորհանդեսը

համայնքային գործիչներ, տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, հեռաուսուցմամբ հետաքրքրվողներ: Միջոցառումը բացեց ՀՎՀ թբիլիսյան մասնաճյուղի համակարգող Մարի Առաքելովան: Նա հավաքվածներին ներկայացրեց հայապահպանության և ազգապահպանության վեհ գաղափարների իրականացնող Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության գործունեությունը, որի ոլորտներից մեկը կրթական համակարգն է եւ ողջ աշխարհի հայությանը հայեցի կրթություն ստանալու

2 / 6

Կայացավ Հայկական վիրտուալ Համալսարանի Թբիլիսիի «Հայարտան » լսարանի շնորհանդեսը

հնարավորության ընձեռումը: Նա տեսաֆիլմի միջոցով հավաքվածներին ծանոթացրեց Հայկական Վիրտուալ Համալսարանի ուսուցման մեխանիզմին, որից կարող են օգտվել բոլորը՝

3 / 6

Կայացավ Հայկական վիրտուալ Համալսարանի Թբիլիսիի «Հայարտան » լսարանի շնորհանդեսը

անկախ տարիքից, գտնվելու տեղից և գիտելիքների մակարդակից:

Այնուհետեւ ներկայացվեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն կից գործող Թբիլիսիի «Հայ
արտուն
»
մշակույթի
կենտրոնում
տեղակայված
ՀՎՀ
նոր
լսարանը
,
որի
բացումն
իրականացավ
ՀԲԸՄ
-
ի
և
Վրաստանի
թեմի
առաջնորդ
Տեր
Վազգեն
եպիսկոպոս Միրզախանյանի
ջանքերով
,
ով
ՀՎՀ
նոր
լսարանի
համար
«
Հայարտուն
»
մշակույթի
կենտրոնի
նորակառույց շենքում
լսարան
հատկացրեց
,
իսկ ՀԲԸՄ-ն այն զինեց համապատասխան

4 / 6

Կայացավ Հայկական վիրտուալ Համալսարանի Թբիլիսիի «Հայարտան » լսարանի շնորհանդեսը

տեխնիկայով և համակարգիչներով:

Միջոցառման ժամանակ իրականացվեց ուղիղ միացում Հայկական Վիրտուալ Համալսարանի երեւանյան գրասենյակի հետ: Հավաքվածներին նոր լսարանի եւ ծրագրի շնորհանդեսի առթիվ ողջույնի եւ շնորհավորանքի խոսք ասաց ՀՎՀ-ի ընդհանուր գործադիր տնօրեն Հասմիկ Խալաթյանը: Իսկ համակարգողներ Դալար Ղազանչյանը եւ Արփինե Թալաքալյանը խոսեցին ՀՎՀ-ի թբիլիսյան լսարանի եւ ուսուցիչ

5 / 6

Կայացավ Հայկական վիրտուալ Համալսարանի Թբիլիսիի «Հայարտան » լսարանի շնորհանդեսը

-
հրահանգիչ
Աշխեն
Էրոյանի
արգասաբեր
աշխատանքի
եւ
նախագծված
առաջիկա
միջոցառումների
մասին
:

Տեսաֆիլմից հետո թբիլիսյան լսարանի համակարգող Մարի Առաքելովան պատասխանեց
հարցերին
:
Կոչ
արվեց
օգտվել
հայոց
լեզու
,
հայ
ժողովրդի
պատմություն
եւ
հայ
մշակույթ
սովորելու
ՀՎՀ
-
ի
ընձեռած
հնարավորությունից
,
բազմապատկել
հայերեն սովորել ցանկացողների
թվաքանակը
:

Ներկաներին բաժանվեցին ՀՎՀ-ի բուկլետներ:

6 / 6